

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սաւեկանի	6 "
վեցամեայ	6 "
Արսասահմանի	
համար սարեկան	15 "
վեցամեայ	8 "
Աւերիկայի համար	
սարեկան	3 ֆր.
վեցամեայ	1.50 "

Մանուգլան տղր սու շին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեսին աւերիկան համար 20 0/0 զեղջ կըլայ :

Վառնայի համար
ձևով 10 սանթիմ

ՇԱՐՋՈՒՄ

Նախկէ որսով որկից խորագրութեան հասցիքն

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Production du journal "Charjourn" (Bulgarie) Yarna

Պուշկարիոյ համար
ձևով 13 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար
ձևով 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ լեզու
սրուիք

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՒԻՆ. ՔԱՂՍՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸՆՉՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՆԱԲԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

«ՇԱՐՋՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԿ Է ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԻ»



ԵՐԿՈՒ ՄԵԾ ԶՈՋԵՐ ԵՒՍ

Բուլ. հեռագ. գործակալութիւնը արտասահման հետեւեալ հեռագիրն է ուղղել :

«Սօֆիա մարտ 11.—Երկու կասկածելի հայեր, որոնք նախարարական որոշումով Վարնայից աքսորված էին, վերջերս Սերբիայից գաղտնի կերպով վերագարձել էին այստեղ և ոստիկանական հսկողութիւնից ազատ մընալու համար, որ մայրաքաղաքում խիստ է սեղաւորվել էին կենսաժողովում : Այդ երկու անձերը անցեալ շաբթու մէջ Վիտոզլերան վա գինամիտի փորձեր արած միջոցին սպանվել են : Իշխանութիւնները զոհերի անձնաւորութիւնները ստուգելու նրանց նպատակները և ընկերակիցներին ճանաչելու նպատակով գործը գաղտնի կերպով քննում էին և մինչեւ երէկ հազիւ թաղման արտօնութիւնը տուին :

Առայժմ հաստատված է միայն որ զոհերը պատկանում են հայ յեղափոխական «Իրօշակեան» ընկերութեան :

«Վեչերնա Բոշթա» թերթում «Իրօշակոյի խմբագրութեան կողմից երկու զոհերի թաղման մասին հրատարակված մի յայտարարութիւնից հասկանում ենք որ այդ դժբախտ և անակնկալ զոհերը են Գրիտափոր Միքայելեան և Էղուարդ :

Սպասելով «Իրօշակոյի» տալիք մանրամասն բացատրութիւններին այդ մեծ դժբախտութեան և նրան զոհ գործիչներին կեանքի ու անձերի մասին, ձեռք առ այժմ այսքանը կասենք, որ Դաշնակցութիւնը յանձին Գրիտափոր Միքայելեանի կորցնում է իր տեսակի մէջ մի շատ կարեւոր

ուր հին ուժ և անդամ, որը գեթ թէ եւ արդէն յիսունին մօտիկացած, կարող էր շատ ծառայութիւններ մատուցանել կազմակերպութեան. իսկ յանձին էգուարտի ապստամբական գեղափոխութիւն մի ուժ, որը կարող էր յեղափոխական փայլուն ապագայ ունենալ :

ՍԱՍՈՒՆԻ ՏԱՌԱՊԵԱԼՆԵՐԸ

Տարուց աւելի է որ թաղախորհրդի գիտակցութեամբ մի յանձնախումբ կազմվեց ուսական սահմանադրում ապաստանած գաղթական հայերին օգնելու համար. ժամանակին այդ գործում ուղարկվեց կաթողիկոսին և կրկին ետ վերագարձվեց, որովհետեւ այդէն ուշ էր : Այժմ այդ գումարը, որը 1000 ֆրանքից կարծեմ մի քիչ աւելի է, պահվում է մի ընկերութեան ղեկավարման մէջ, բոլորովին ոչ մի նպատակի չը ծառայելով :

Այսօր մենք հրապարակի վրա ունինք Սասունի տառապելները որոնց ամեն կողմից օգնութիւն է հասնում : Ամիսներ առաջ Վարնայի թաղ. խորհուրդը Պարիսից պաշտօնական թուղթ ստացաւ խեղճ սասունցիների համար օգնութիւն հաւաքել. սակայն նա ոչ եռանդ և ոչ գործունէութիւն ցոյց տեց այդ անհրաժեշտ եւ ստիպողական խնդրում : Մի խումբ պատանի ու երիտասարդներ իրենց քաղաքացիական պարտականութիւնը աւելի գիտակցելով քան մեր ընտրեալ ղեկավարը, կազմակերպելով մի ներկայացում ինպատկով շուտ Սասունցիների ստեղծեցին 800 ֆրանկի շափ մի գումար, որը կարծեմ թէ պատրիարքի միջոցով պէտք է հասցընեն նպատակին :

Կարծում ենք որ թաղական խորհուրդը և մի տարի առաջ 1000 ֆրանք հաւաքող ու մինչեւ

օրս պահող յանձնախումբը լուկանեն եթէ այդ գրասր անմիջապէս կցելով ԳՈՂԹԱՆ խմբի ունեցած գրամին ուղարկեն Պարիսից Սասուն հասցնելու համար : Մանաւանդ երբ շշուկներ են տարածված թէ թաղական խորհուրդը մտադրութիւն ունի յանձնախումբի մօտ գտնված գրամը մի ուրիշ գործի վրայ ծախսել :

Հազար ֆրանկը հաւաքված է սահմանադրի վրայ տառապող հայերի համար. այսօր այդ խնդիրը գոյութիւն չունի, բայց երկրի ներսում մեծ տառապանքի մէջ է գտնվում Սասունցի հայր և ուրեմն գրամի գործածութիւնը չէ շիջում իր նպատակից. ընդհակառակը նա գնալու է բուն երկրի ծոցում տառապող հայի ձեռքը :

Յուսով ենք որ թէ յանձնախումբը և թէ Սասունի վերաբերմամբ բոլորովին ապաշորս թաղ. խորհուրդը ըմբռնելով որ Սասունին անմիջական և զգալի օգնութիւնը հասցնելը ազգային ամենամեծ պարտականութիւն է անմիջապէս հազար ֆրանկը կցելով ԳՈՂԹԱՆ խմբի ունեցած գրամին կշտապեն օր առաջ ուղարկել ուր որ հարկն է :

Մենք հաւատացած ենք որ այդ հազար միլիոնը նուիրող հայերը ոչ մի դժգոհութիւն չեն ունենայ. ընդհակառակը նրանք շատ մխիթարված պէտք է զգան իրենց, համոզվելով որ տառապելի հային ներված գրամը կրկին տառապելու և թշուառ հային է յանձնվում, փոխանակ բանկաներում կենալու և ժամանակի ընթացքում մոռացվելով ուրիշ աննպատակ բաների համար ծախսվելու :

ՎՏԱՆԳ ԹԷ ՅՆՈՐՔ

Մեր երկրորդ յօդուածով ցոյց տըւինք օրէնքին գործադրման անկարելիութիւնը ներկայի մէջ ընդհանուր կերպով :

Այժմ կուգանք խնդրը մասնաւորել մեր վարժարաններու նկատմամբ : Մեր ազգային վարժարանները օրէնքին տեսակէտով կը գանուին նոյն պայմաններու մէջ. ինչպէս միւս մասնաւոր վարժարանները :

Եթէ օրէնքին գործադրումը պահանջուի միայն մեր վարժարաններէն, ապիկա մեզի նկատմամբ ակներեւ անիրաւութիւն մը ըլլալէ վերջէն շահակէ նաեւ յայտնի առանձնաշնորհում բոլոր համայնքներու հանդէպ, որոնք վիճակակից են մեզի, իսկ առանց նաշնորհումները ինչպէս անհատներու, նոյնպէս եւ համայնքներու համար խստիւ արգելւած են երկրին սահմանադրութեան մէջ : Երբ պուլկարական երեսփոխանական ժողովոյ մէջ այս օրէնքը կը քուէարկուէր առաջարկ եղաւ բացառութիւն մը ընել տաճկական վարժարաններու համար. բայց այդ առաջարկը չընդունուեցաւ ճիշդ այն պատճառաւ որ իրեն առանձնաշնորհումը հակասահմանադրական էր :

Բայց այս վերջին կէտը գեթ ինքնին բաւական համոզիչ պարագայ մը չէ, որովհետեւ Պուլկարիոյ մէջ դեռ կը պակսին այն հասարակական ուժերը, որոնք կարենան հսկել սահմանադրութեան վրայ. անոնց պակասութեան շնորհիւ միայն կարելի է բացատրել այն հակասահմանադրական գործողութիւնները, որոնք տեղի ունեցած են եւ ունին մինչեւ ցարդ :

Բայց եւ այնպէս բոլոր կառավարութիւնները աշխատած են խոյս տալ այս տեսակ գործողութիւններէ, բաւական է որ իրենց անհատական, կուսակցական շահերը վտանգի մէջ չը գտնուին :

Նոյն իսկ ենթադրենք թէ ներկայ կառավարութիւնը կամ ապագայ կառավարութիւն մը շատ հայրենասէր ըլլայ եւ ջերմ պաշտպան հայրենիքին շահերուն, տեսնենք թէ մեր վարժարաններու նկատմամբ միայն օրէնքին գործադրումը վաղուան մէջ ինչքան մեծ շահեր կ'ընայ տալ իրենց :

Մենք, հայերս՝ բաղդատմամբ միւս օտար ազգերու հետ Պուլկարիոյ մէջ ամենափոքր համայնքը կը կազմենք, այն ալ ցրուած զանազան քաղաքներու մէջ : Ասով ոչ միայն Պուլկարիոյ ներքին եւ արտաքին քաղաքականութեան վրայ այլ նոյն իսկ քաղաքի մը կառավարութեան վրայ ալ ազդելու կարողութիւն չունինք :

Միեւնոյն ատեն մարդ մտքն ան-

Կայարան նոգա Չակորա

Եզրարք Սուրբ Գրքի 20 ֆրանք
Համարձուս Կիրակոսեան 10, 10 Ե
սայի Մայատուրեան 10 Մանուկ
Թագուրեան 2 Յակոբ Պատմանեան 3
Գումար 45.10

Կայարան Սթրուճա

Տիարթ Մուրատ չսփուշ Ղազարեան
10 Ստեփան Միքայելեան 2 Գրիգոր
Իկիթեան 2 Տիգրան Սուքիսեան 5
Մարտիրոս Կարապետեան 2
Մարգար Առաքելեան 2 Մկրտիչ Յակոբեան
19 Յարութիւն Միսիթարեան 5
Ուն 2 Մելքոն Միսիթարեան 5
Վարդան Աղաճանեան 2 Թորոս Շալ-
ժան 3 Պաղտատար Մուրատեան 5
Ղազար և Սահակ Եղբարք 5 Մարտիկ
Մկրտիչեան 3 Գէորգ Մկրտիչեան 5
Մելքոն Բազիկեան 3 Ներսէս Աստուածատուրեան
2 Առաքիլ և Եղբարք 3 Յակոբ Ամբէեան
5 Գրիգոր Գալուստեան 5 Վալդան Յովհաննէսեան
5 Մուրիտ Սերբեան 2 Եղբարք Ճէ-
գոյեան 2 Մինաս Աւետիսեան 3 Յակոբ
Նահապետեան 5 Մելքոն Ովէթեան
1 Աստուածատուր Գրիգորեան 2
Յովհաննէս Աւետիսեան 2 Գրիգոր
Մուրատեան 1 Մկրտիչ Սարգիսեան
Յակոբ Հազոյեան 1 Նիքոլա Անթի-
քան 2: Գումար 133

Կայարան Գարարունար և քաղաքը

Տիարք Վարդան Պաղտատարեան 5
Գրիգոր Վարդանեան 5 Արուստ Պաղ-
տատարեան 5 Գրիգոր Մուրիտեան 5
Վարդան Մինասեան 2 Պոզոս Սար-
գիսեան 5 Սերոբ Մուրիտեան 5 Սի-
մոն Արապաճեան 5 Գրիգոր Թագուրեան
10 Մկրտիչ Պաղտատարեան 8:
Գումար 55

Սիվէնէն. — Ծննդեան տօնին առ-
թիւ տունները շրջաքայած գանձանա-
կի հատոյթը 50 ֆրան, Ս. Լուսաւորչեան
վարձարանի երրորդ դասարանի
աշակերտ և աշակերտուհիներէն 5.50
Ընդհանուր գումար 534.70
Բոլոր նուիրատուաց կարողութիւն
և յաջողութիւն մաղթելով՝
Մնամ Աղոթարար
Վաղիակի ֆահանայ
Իսլիմա 2 Մարտ

ՍՐԱՀ ՊՈՒԼԿԱՐԻԱ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՎՈՅԹ
Ի նպաստ
«ՀԱՅԿԱԿՍՆ» ԸՆԹՆՐՑՈՒՄԻՆԻ
Մարտ 19ին շարժով գիշեր ժա-
մը ճիշդ 9ին առաջնորդութեամբ
պ. Վ. Պապանանի պիտի ներկա-
յացուի:
ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ
Ողբերգութիւն 3 արար
Երգ և պար Օր. Քաթիկոսի կողմէ
և ձիծաղք շարժ գաւեջտ մը

ՅՕԹՕԿՐՅԻՆ «ԱՐԹԻՍՏԻԲ»
ԵՒ
ՆԿԱՐՉԱՏՈՒՆ
Պատիւ ունիմ ծանուցանելու Ար-
գոյ հասարակութեան թէ՛ Ձար-Պորիս
փողոցի վրայ նոր բացուած լուսա-
նկարչատան մէջ կընդունիմ յանձ-

նարարութիւններ լուսանկարներ
պարզ և բնական գոյններով: Նոյնպէս
մեծագիր դիմանկարներ, իւզաներկ
և ֆրէսկո (զարախայէմ):
Կընդունիմ նաեւ նկարչութեան
վերաբերեալ ամէն յանձնարարու-
թիւնք:
Պատ. յաճախորդներս ամէն կեր-
պով գոհացնելու համար ջանք չպիտի
խնայուի:

Մասնաւոր դասեր կը տրուին նը-
կարչութեան և լուսանկարչութեան
մասնաւոր պայմաններով:
Ա. Զարեհեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրթական նախարարը հրամա-
նագրով մը աղջկանց միջնակարգ
գարտններու վարչութեանց հը-
րամայեր է որ ուսանողուհիներու
արգելուի «քորսէ» կրել, ու-
րոնք մեծ քնաններ կը պատճա-
ռեն:

— Սօֆիայէն «Պալքանիք» հե-
ռագր. գործակալութիւնը արտա-
սահման հետեւեալ լրացուցիչ
տեղեկութիւնները տուած է երկու
սպաննուած հայերու մասին:

Երկու հայերը կապրին Եղբր
Օթէլ Պուլկարիայի մէջ. մէկը
ժօրիս անունը կը կրէ Եղբր Եւ-
րիլիւնքը Պիլճիգայի ներկայա-
յուցեր է. Զահրուն քով ինչ-
պէս և պակասներուն մէջ ու է
թուղթ մը չէ գտնուած, որ և
խուզարկիչ դատարանին գործը
կը գժուարացնէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պուլէն կը հեռագրեն որ թուրք
չըջանակներու մէջ կը վստահե-
ցնեն որ այս տարի Հայաստանի
մէջ «պատամբութիւն պիտի ծա-
գի»:

— Սուլթանի թիկնապահ զօր-
քերէն 20 ալպանացի սպաններ
գացեր են Ալպանիա, ուր մեծ
շարժումներ կը պատրաստուին:
Ուրիշ ալպանացիներ Եւս կուզեն
իրենց Երլարզի մէջ ունեցած
պաշտօնները ձգել և Ալպանիոյ
երթալ:

ՈՌՈՍԻԱ

Բեթերսպուրկէն «ՆԵՂԵԼԻՆԻՆ»
կրաֆոնի հետեւեալը կը հազօր-
գեն. Դրականապէս կիմացուի որ
անցեալ ամառ Խաչաչի ճարտի
կողմէ հաշտութեան պայմաններ
առաջարկած է. այդ կը հաստա-
տեն այստեղի բոլոր դեսպանա-
տուները:

Յարը համուզուած է թէ որ պա-
տերազմը շարունակուի, Ռուսիա
պիտի աւերուի և հաշտութեան
հակամէտ է, բայց պատերազմա-
կան տուգանք տալու երբէք հա-
ճամիտ չէ, կը մտածէ որ փոխա-
նակչառութեան վճարելու, աւելի
լաւ է պատերազմը շարունակել:

— Ռուսական թերթերը սպա-
նեցու բարոյապէս անկման մասին
կծու յօդուածներ կը գրեն:

— Յարի հրամանովը 200 մի-
լիոն ռուպլիի ներքին փոխառու-
թիւն մը պիտի կնքուի:

— Մարտ 30ին Բեթերսպուրկի
մէջ տեղի պիտի ունենայ Մաք-
սիմ Կօրքիյի դատավարութիւնը
դռնփակ:

— Վարչապետի ոստիկանապե-
տի վրայ ուսմը մը նետեր են և
ծանրապէս վիրաւորեր:

— Մարտ 14ին Բէթերսպուրկէն
Կիմանայ որ նախարարական ժո-
ղովին մեծամասնութիւնը ժա-
մանակը հասած կը համարէ պա-
տերազմը դադարեցնելու քայլեր
ընել:

— «Պիլճիգայի վէտմօսութի»
թերթը կը հազօրգէ որ թուրք-
քեստանէն ոչ մէկ զինուոր կրնայ
երթալ պատերազմի դաշտ, ո-
րովհետեւ ապստամբութենէ կը
վախցուի:

Ի Տ Ա Ի Ա

Մարտ 14ին Հոռոմէն կը հեռա-
գրեն թէ Զուզէթ Լէվի թուրքախա-
բուրովին բուժելու դեղ մը գը-
տած է, որը շատ արագութեամբ
կը բուժէ ու այդ մասին նամակ
գրած է Իտալիոյ թագաւորին:

ՌՈՒՑ — ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Բեթերսպուրկէն Մաթէն թեր-
թին թղթակիցը կը հեռագրէ որ
Իբրթէ ճարտնական նաւատորմի զը
յարձակեր է Բօժտէնսիլէսիկի
նաւատորմի զրայ և քնաններ
հասցուցեր է Սիսոյ Վէլիկի Եւ
Նալարին զրահաւորներուն:

— Ռուսները պատերազմի ըս-
կիզբէն մինչեւ վերջ. 27 պա-
տերազմի դաշտ զրկեր են 13084
սպայ, 761,467 զինուոր, 146408
ձի և 1524 թնդանօթ:

— Գունտուլինէն կը հազօր-
գեն մարտ 13ին որ հոն լուր տա
րաժուած է թէ ճարտնացիները
կուզեն ռուսական բանակին եր-
կու թեւիւրուն ետեւը անցնիլ. և
այդ շարժումը իբր յարձակում
կընդունուի: Ճարտնական հեծե-
լազօրքը այժմ թուով առաւել է
ռուսներէն որովհետեւ խուսիսույ
ները միացած են իրենց:

— «Նօօօ՛՛ Վրէմիայի թղթա-
կիցը կը կասկածի որ առանցքը
կարենան Չանսուն պահպանել. ու
եթէ հոն դիմանալը անկարելի
ըլլայ ռուսները պարտաւորուած
Սիպերիա պիտի նահանջեն:

«Սիլօթ թերթին կը հազօրգեն
որ ճարտնական զօրաբաժին մը
դէպի Յիցիկար կերթայ. իսկ ու-
րիշ աւելի մեծ զօրաբանակ մը
դէպի Կիրին և Վլատիկօսթօք:
Ռուս մամուլը կը յանձնարարէ
տարի ուկէստան պաշար զրկել
Վլատիկօսթօք:

ԵՐԿՐԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆ. ՄԻՈՒԹԻՆ

Շրջաբերական Աւանակ

Ը ն կ ե ը ն ե ը

Ներկայ տարւոյ համագումարը
կը կայանայ ապրիլի 1ին, Շվէյ-
ցարիայի Բէրն քաղաքում:

Այդ սաբիթով խնդրում ենք
բոլոր ուսանողական մարմիննե-
րին:

1) Հրաւիրել ժողով և ընտրել
պատգամաւորներ (Կանոն. յօդ 10)

2) Որոշել այն հարցերը, որ
ցանկանում են ենթարկել Համա-
գումարի քննութեան:

3) Ուղարկել մեզ՝ Համագու-
մարին դասախօսել ցանկացող
ընկերների անունները, ինչպէս
և դասախօսութեան վերնագիրը
(յօդ. 18):

4) Ուղարկել վիճակագրական
տեղեկութիւններ, «Տեղեկագրի»
մէջ մտցնելու համար:

Այդ բոլորը պէտք է հասցնել
ոչ ուշ քան մարտի 20ը, որպէս
զի կարող լինենք «Օրակարգը»
պատրաստել:

Պարտք ենք համարում աւե-
լացնել, որ Համագումարը բանա-
լու համար՝ անհրաժեշտ է ուսա-
նողական մարմինների գոնէ
պարզ մեծամասնութեան մասնակ-
ցութիւնը:

ԼԻԱԶՕՐ ԿՕՄԻՏԷ

Ռուսուց ծխալուծառ Բասմաճեանի
քով կը ծախուին Եւրոպ. Հայ Ու-
սանողական Միութեան հրատարակած
Հայաստանի Քարտէզներ. Օտար
քաղաքներէն ստանալու համար 1.20
սանդիւ պէտք է զրկել:

ԹԱԿՈՒ Կ. Հ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
(Սարազ) ՎԱՌՆԱ
Չանազան ընկերութեանց արժե-
թղթեր կը գնէ: 12—12

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆ

Պօթոն հրատարակուող «Երիտա-
սարդ Հայաստան» շաբաթաթերթը՝
դիւր ու թեւաւ ստանալ ուզող
Պուլկարիոյ եւ Ռուսաստանի Հնչակ-
եան մեր մասնաճիւղերը և ընկերները
իրենց որ ոչ հասցէներով պէտք է
գրին հետեւեալ հասցէին:

Г. Тячо Пеняовъ ул. Опълченска № 1
за Х. Х. Х. Пловдивъ

Տօքթօս Թորոսեան կընդունի ա-
մէն տեսակ հիւանդներ. կէսօրէն
վերջը ժամը 2էն մինչեւ 4
Բնակարան է
Փողոց Տունաւաքա թիւ 3

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница «Взаимность» Варва